

1. Ս. Փրկչի վանքին պատմութիւնը.

Կայրափայի տունը կը յիշատակուի իբր աւերակ տեղ մը՝ ուր 333ին այցելած է Պորտոյի անանուէն ուխտաւորը որ կ'ըսէ. «Սելովամէն Սիոն երանք, այսինքն արեւմտեան բլուրը որ ընդհանրապէս այս անուամբ կը կոչուի, և կը թուի ըլլալ այն տեղը ուր էր Կայրափայի տունը»: Կիւրեղ Երուսաղիմացին Կայրափայի ապարանքը իր օրով աւերակ ցոյց կու տայ. «կշարքնն գեղ եւ սպարակնն Կայրափայ, որ եւ այժմիկ կործանուան ցուցանեն քեզ գրասպարկոյն գորութիւն» (Կոչումն Ընծայութեան, Գիրք ԺԿ.). միևնոյն աւերակ վիճակը տեսած է մինչև 400 թուականը:

325-360 թուականներուն՝ սրբավայրերու շինութեանց առթիւ միայն նկատի առնուեցաւ պահպանել Զաղանաց սիւնը Ս. Սիոնի մէջ. մէկ դար վերջն է որ կառուցուած է Կայրափայի տան աւերակին վրայ սրբավայր մը, յանուն Ս. Պետրոսի, 530ին միայն կը յիշատակեն զայն Թէոտոսիոս ուխտաւորը և Անանուսի մը Breviarus de Jérusalem անուամբ պատմութիւնը:

Ուղեգիրներու վկայութիւնները և նորագիւտ յիշատակարանները կը հաստատեն թէ շատ կանուխէն Կայրափայի տան տեղւոյն վրայ շինուած սրբավայրէն զատ ուրիշ եկեղեցի մը կառուցուած է նաև Ս. Պետրոսի հառաչտանաց կամ զղջման տեղւոյն, այսինքն ուղղակի Սիոնէն Սելովամ իջնող փողոցը գտնուող բլուրին արեւելեան զառիվայրին վրայ: Այս երկրորդ սրբավայրին վրայ առանձինն կ'անդրադառնանք:

Որքան որ վերելի յիշատակարանները նոյն սրբավայրը Ս. Պետրոսի անուամբ կը կոչեն, բայց Հայք Ս. Փրկչի կը կոչեն զայն, ի յիշատակ Փրկչին չարչարանաց, զոր Ան կրեց այս տեղւոյն մէջ: Դարձեալ նոյն նպատակաւ ուխտաւորները ի վաղուց հետէ յարգած են Զաղանաց սիւնը և Քրիստոսի Բ. Բանը՝ որ փոքր մատուռի մը վերածուած է: Նոյն տեղւոյն վրայ գոյութիւն ունի նաև խոշոր վեսխար մը՝ որ հոն բերուած է ըստ աւանդութեան, իբր Կախարիչը Ս. Գերեզմանին: Երբ Խորագմանք 1244ին խորտակել կ'ուզէին զայն, հոն կը գտնուէր նաև սիւնի այն կտորը որուն վրայ թառած աքաղաղը խօսեցաւ Պետրոսի ուրացման ժամանակ: 1479ին Յիւլիքոս Յապրի կը պատմէ թէ Հայերը ծայրայեղ աղքատութենէ մղուած կը մտածէին այս